

ՊԱՏՄԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ԶՀԱՍՏՈՏՈՒԹԵՆԷ

ՀՈՌՈՄՈՍԻՆ Վ.Ս.ՆԱՅ Ի ՇԻՐԱԿ:

ՇԻՐԱԿԻՆՆԵՐ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԶԱՄԱՆԱԿԱՆ Վ.Ս.ՆԱՅ

Մենաստան Հոռոմոսին կոչեցեալ վանաց՝ է յարևմտեան մասին Շիրակայ^{*)}, յարին Ախուրեան գետոյ ի հարաւոյ այնորիկ ի վերայ բարձր բլրոյ, զորով շրջապատ անցանէ գետն. Այս բլուր յոյր վերայ մենաստանն, ի հիւսիսոյ հաւասար է դաշտին, ընդ որ և մուտք է վանացն. իսկ ի միւսոյ կողմանցն երկոց ևս բարձրաբերձ է բլուրս. ստորոտք այնորիկ իջանն ի ձորն անմատչելի. զորովք անցանէ գետն. և է Հոռոմոսին վանք հետի յԱնուոյ Բաղաբէն իւրեւ քառորդ միոյժամու յարեւելից հիւսիսոյ այնորիկ:

Ի պարսպապատ մենաստանի Հոռոմոսին վանաց են երեք եկեղեցիք հանդերձ ժամատամբ. այլ վանքն զի այժմ մեծ և հրաշակերտ է Սուրբ Յովհաննէս եկեղեցին կառուցեալն ի յովհաննու որդւոյ զագիւյ յետոյ քան զՀոռոմոսին, յորում առնեն զժամերգութիւն, վանն այն և մէք նախ զայն ստորադրեմք:

Եկեղեցին Սուրբ Յովհաննէս անուամբ կառուցեալ ի թուին հայոց ՆՁԷ. ի Շահնշահ Յովհաննու որդւոյ Գագիւյ շահնշահէ, է հոյակապ զրմբեթարդ և անսին. միջին երկայնութիւն նորա քան և վեց կանգուն. (100) ի սեղանոյն ցլուռն արևմտեան. որ մի միայն է բացեալ ընդ մէջ ժամատանն. չորեքին սրմասիւնքն՝ են եռակարգ յառաջոյ. և վերնախարիսխքն ուղղաձիգ շրջանակաւ որոշեալք. յորոց վերայ է կարի հաստատուն կա-

մարք երկարաձև քան բոլորչիք. ի գլուխ նոցին ձգեալ կամար զմեկմին, ամբարձեալ է ի վերայ այնորիկ զմեկմին սրածայր որ է համակ ի կարմիր քարանց, և ունի ուղղաձիգ շրջանակաւ նմանութիւն Վաթուղիկէին Եջմիածին:

Երկու խորանք են յաջմէ և յահեկէ սեղանոյն. իսկ ի սեղանին զոյ խաչ քանդակագործ փայտիչ շինեալ ի Սուրբիս Վարդապետէ, որ եղև յետ եպիսկոպոս Եջմիածին:

Զորս լուսամուտք են զմեկմին, և հինգ՝ եկեղեցւոյն. երկու երկու. ի հիւսիսոյ և ի հարաւոյ, և մի՝ յարեւելից. միջին տապ տաճարին է իսպառ անդրուսդաւոր և առանց քանդակագործութեան:

Մի դուռն միայն ունի, որ բացեալ լինի ընդ մէջ ընդ ձախ ժամատանն:

Ի ներքոյ վերնախարիսխի հիւսիսային յետին որ մասեանն՝ է ընդարձակ զիր յիշատակաց, որ իսպառ անվերձանելի է ի սակս կրեղոյ զմէջ եկեղեցւոյն. — Զիք այլ քան զայս արձանադրութիւն յորմունս սուրբ յովհաննու. որ ինչ արձանագիրք են Հոռոմոսին, այն ամենայն են յորմունս ժամատան սորին սուրբ Յովհաննէս եկեղեցւոյս:

Ի՝ ԺԱՄԱՏՈՒՄՆ ԵՄՔ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՂԵՑՈՒՄՆ:

Ժամատուն սրբոյն յովհաննու կառուցեալ նոյնպէս ի Շահնշահ յովհաննու ի ՆՁԷ. թուականին հայոց, գրեթէ համակ սինաղարդ, վեց բոլորչի սիւնք են ի միջին, չորք չորք ևս նմանադիպ նոցին՝ կից ի հիւսիսային և ի հարաւային որմունս, և երկու երկու յարեւելեան և յարևմտեան որմունքս. որք ամենեքեան ևս ունին զքառանկիւնաւոր վերնախարիսխս և զբոլորչի ներքնախարիսխս ի սեաւ քարանց համակ կոխածոյս:

Ամարք տանեաց ժամատանս արկեալք ի վերայ վեցեց միջնասեանցն և յաջ և յահեակ ի ջնալք ի զլուխ որմասեանցն, ամբարձեալ ունին զկիսազմեթ լուսամուտն ի կեղորնի. որ սկսեալ քառակուսի, աւարտի ի ձև բոլորչի, որպէս և Հատիւնոյ վանացն. և յրնդարձակութեանն անդ բարձրութեան քանդակագործեալ է ի շրջապատն՝ պատկերք սրբոց և դրուագք պէս պէս մինչ ի ուսամուտն ի վեր:

Ի ճակատս արեւելեան կամարինն ի վերնախարս-

*) Տես Թիւ Թ. և Ժ:

**) Արեւմտեան Շիրակ կոչի մասն զատոխն երկու յայնկոյս Ախուրեան գետոյ ի սահմանին տանկոյ. իսկ Արեւելեանն՝ յայնկոյս գետոյն՝ ընդ ոշխանուէնամբ Առասոյ:

իսկ առաջնոց երկուց սեանցն՝ են ընդարձակ գիր յիշատակաց որպէս ի վերայ բովանդակ որմնցն . զորս քստ կարգի ունիմք յառաջ բերել :

Իսկ ի Ճակատ արեւմտեան դրան ժամատանս է արտաբուստ արձանագիր շինութեան եկեղեցւոյն և այսորիկ իսկ ժամատանս ի Յովհաննու որդւոյ Գաղիայ հանդերձ թուականաւ :

Յարկ ժամատանս է համակ դրուագեալ վարդաձև և մանրանկար փորութեամբ քարանց , որոյ և բոլոր շինութեամբ են ի սեաւ քարանց . լուսամուտք նորա են երեք բոլորչիք ի հիւսիսոյ . և մի ևս երկարաձև ի ճակատ դրանն մեծի :

Ի միջավայրի տանեաց ժամատանն ի վերայ կիսապիկնեկայ լուսամտին , կառուցեալ է զանգակատուն փորրիկ սիւնաղարդ և անկիւնաւոր մարդաւախ բարձրութեամբ . բայց միջոց սեանցն ի յետնոց քարաշարեալ . ունի զիսաջ ի գլուխ իւր , և զանգակք փորրիկ երկուք ի միջի . զոր ոչ էր սովորութիւն . յեկեղեցիս հարստակաց Օսմանեան պետութեանն նախ քան զայս ունել յաջէ նոցա . յորս բռնացեալ մահմետականութեանն ի վերայ քրիստոսական հաւատոց , բայց եթէ ի հինաւորաց մենաստանս :

Արշակունիքի Եւսեփոսեան Եւսեփոսեան Եւսեփոսեան :

Եւսեփոսեան Եւսեփոսեան Եւսեփոսեան :

Ի ճակատ Արեւմտեան դրանն :

Ի 'նՁէ . թուականիս հայոց ետու ես յովհաննէս Շահնշահ որդի գաղկայ Շահնշահի . զիմ պղին որ ի կողբ . յիմ եկեղեցիս սուրբ յովհաննէս , զոր շինեցի ի վանս Ս . Հոռոմոսի հանդերձ ժամատամբս . եւ հարիւր բնուն աղ յամենայն ամի աղատ յամենայն չարէ . ի Հայրապետութեան տեառն պետրոսի և յառաջնորդութեան ուխտիս հաւ յովհաննիսի արդեամբ . զկնի մեր հակառակ զրոյս և իմ պարգեացս . պարտական մեղաց իմոց առաջի Աստուծոյ եւ ՅԹԸ . հայրապետացն որ ի նիկիա , նղովեալ եղիցի ի կեանս և ի մահ . իսկ որ հաստատուն պահեն զգիր արձանի ընծայիցս , աւրհնեցին ի Քրիստոսէ :

Յորմն Արեւմտեան ի Չախակողմն դրանն

ի ներքուստ :

Ի թուին 21 . եւ մկրտիչ Արեղայ որդի Ռազին և իմ հոգեւոր եղբայրս զրիզոր քահանայն ,

շինեցաք վերադին զընծայինն յԱրեւի և ի վարպի . և արհաք նորոգ . սոլասուորքս հասուցին մեղ ի տարին Գ . պատարագ . Բ . Ռազին . Բ . Խոջա տին . և յետ եկից մերոց մեղ առնեն . կառարիչք աւրհնին յԱստուծոյ :

Եւսեփոսեան ի վերայ կամարին .

Ի ՌԾ . թուին . ի տեղութեան երկրիս Զաքարիայ , եւ Եսայիս ծառայ Աստուծոյ և հաւատարիմ իմ պարտին Զաքարիայ , միարանեցայստ լուսամտիս . եւ ետու զիմ զգաղացն որ ի կողս շինեալ էի ի զլի ձորին . հմնուկիցն ներքի զիս զունիճանց . յիշատակ ինձ և ծնողաց իմոց . և յանուն իմ պատարագի Քրիստոս ԹԲ . ի տանի սուրբ մարգարէին երեմիայի անխափան մինչև ի ծագումն որդւոյն Աստուծոյ . կառարիչք զրոյս աւրհնին յԱստուծոյ :

Ի հոյն ու մն ձախակողման , կից ընդ կամարն :

ԱԿԼ :

Ամառ մարգարէին Աստուծոյ եւ վարդաձիւ վարդեանց աղաւթնեցայ ի սուրբ Աւստոս . ետու զիմ զանձաղին Աուղպակ և ի ներքեւն պատքի յԱնի ի վերի փողեցին , տանկից է տիգրանայ ի յառաջնորդութեան հաւր զրիզորիս սրբափրի . պատարաբեցի Քրիստոս ի տարին Գ . աւր . զԲ . ինձ . և Բ . զուղակցին իմոյ Յիկնոյն . կառարիչքն աւրհնեալ եղիցին ի Քրիստոսէ . ի ԱԿԼ . թիւն . զեղբարս յիշեցէք ի Քրիստոս :

Ի Գլուխ ձախակողման երկրորդ սեանն ի վերայ կամարին . անձուական :

Զաւրութեամբն Աստուծոյ եւ շերանիկս զաւրացայ ի զինուորութեան . եւ արդ անկեալ կամ ի վանքս առաջի սուրբ խաչիս Քրիստոսի . զի ողորմեաց ինձ Քրիստոս Աստուած . ետու զիմ զանձաղին պղին ի ծմակին . յանուն իմ պատարագի Քրիստոս Զ . ի տարին ի խաչ զիւտի . եւ մարիամ զուղակից շերանեանն ետու ի սուրբ Յովհաննէս ծակնաց կէս զանկն իմ զանձուկս դնած . յանուն իմ պատարագի Քրիստոս Զ . աւր :

Ի միւս ծայր կամարին՝ նոյնպէս անձուական :

Եւ Աւիւծս որդի Աստուածաորոյ միարանեցայստ սուրբ ուխտիս և ետու ի յանորդին փողեցի զիմ զանձաղին Աուղպակն , որ շինեցի . ներքի զիս

քանակից և աւետանցն. Բ. Կուղպակ ի կտերն. Ե. ի վերայ Կուղպակին է. Ա. խրեան զիմաց. որ. է ներքեւ. վասն յիշատակի զուգակցին իմոյ Համաւորին. յանունս մեր պատարադի Քրիստոս. Բ. աստուածատրիս. Եւ Բ. վահրամի. Բ. կողակցոյն իմոյ Համաւորի. կատարիչքն աւրհնեալ եղիցին յԱստուծոյ:

Յորմն հարաւոյ:

Ող. Ե. կամաւ բարերարին Աստուծոյ ի Թաղաւորութեան Հայոց և Վրաց Դաւթի. և ի սպասարութեան Հաճեալի որդոյ մեծին զարարիւցի և յաւաճորդութեան տեառն բարսդի արք եպիսկոպոսի որդոյ Ամիր երկամոյ. Ես Աշոտ զսեղեցի որդի գէորգի թոռն Աշոտոյ միարանցաց սուրբ Յովհաննէսի ի նեղ և ի չար ժամանակիս յետ կործանման Ցաթինարին, մինչ էր վանքս ի նեղութեան ետու զամենագոյ աւետարան. Գ. եղն. Գ. կով. Գ. էջ. Բ. ձի. Եւ այլ ինչ Աստուած պատրաստեր է. Ես տէր բարսեղ և Սարգիս Վարդապետս և այլ եղբարքս ընկալաք զնա իրրե զմի ի պատրոնաց մերոյ և փոխարէն հատուցաք յամեն ամի զկնի նոր կիրակէին՝ Ի, աւր պատարաւից զՔրիստոս յանուն Աշոտոյ որչափ կենդանի է իւր ծնողացն. յետ ելից յաշխարհէս Աշոտոյ կատարինք. որ հաստատուն պահեն, արհնին յԱստուծոյ. և որք խափանեն, նշովք զյուզացին առցէ և զկայենին...

Յորմն Հիւսիսոյ ի ներքոյ լուստմուն:

2ԻԹ. կամաւն Աստուծոյ ես մաքրաս զուսոր Երասլուն և Թոռն Տիգրանայ՝ ետու զիմ հայրենի բաժինք ի Գեղն ձոնքագոմ ի սուրբ Յովհաննէսի յիշատակ ինձ և որդոյ իմոյ Սարգիս. Եւ սպասաւորքն հաստուցին տարին՝ Ե. աւր պատարադ. Բ. ինձ. Գ. Սարգիսն. Եթէ որ զնուէրքս մեր հանէ ի վանացս. ՅԺԸ. Հայրապետացն նշոված է:

Ի վերայ կամարին միայ ի յետին սեանց ժամատանն. Անձուական:

Ի Երուճ փոքր պղիք են Վանացս, Եկեղեցիքանին, փաշտուտին. լապտակացն, Հանկանն. Ա. զիմ կանն, Աղայեանացն. թա խարեանցն. խաչ. զբարցն. և պատարադի Քրիստոս յանուն սոցա ի խաչին ութօրէքն՝ Ի. ի ձորին ծմակենոյ գնեցին

փանեցիքս. և մարմնոտր Կուղպակի Ի. Դահեկան ետ ի գինանց. Յանուն յորա պատարադի Քրիստոս Գ. մէք Հոռոմոսին վանականքս:

Ի ներքոյ տրին լստ սցոմանմաւական:

Ես Արաւիր Աղցացի ետու զիմ հայրենի դանձաղն զԱռուտն, զի յիշեցնե զիս առաջի գնման Քրիստոսի. Ես փաշտուտս ետու զիմ ծաղկոյի կէան զԽոսրովեանցն. Ես խաչիկ երէցս միաբանացայ վանացս և ետու զիմ ծաղկանոցս:

Ի միւս ծայր այսր կամարի:

2ԾԻ. Հնորհին Աստուծոյ ես մամուկս զուսոր վահրամայ ետու սուրբ Յովհաննէսի մեր Տաղանատունս վեղամե ցմարդի բովածորոյ ի կամրժէն ի վաղաւորւճ ահրահն յանուհաղենի վաղաւերան Բ. աւերակովն, որ ի տարին Զ. աւր. պատարաւից զՔրիստոս. Ա. ինձ Ա. կուրապաղարին. Ա. Ամիրային. Ա. արտամին. Ա. վահրամին. Ա. դահար Խաթունին. կատարիչք գրոյս աւրհնին յԱստուծոյ. Սիմէոն գրիչ:

Ի վերայ կամարի ծախսկողման յետին սեանն.

"Հոռոմոսին վանացս հայրենիք որ ի քաղաքին՝ այս են գէորգ ծերենց վանացս ետ զիւր հայրենի տներն մաւտ ի կարուց գուռն. Սուրբ յսեկաննոսի ընդդէմ և այլ արդիւնք ետ. և առ զիւր տաւնին պատարադն՝ Գ. զիւտիկ կրօնաւոր ետ զիւր հայրենի տունն ի քարափանն, և առ զիւր հիւսիսին պատարադն՝ Գ. Վահրամ ետ Կուղպակ ի դարբնափողոցին մաւտ ի Սուրբն գրիգոր. և պատարադ մատչի յանուն նորա Բ. Արրահամ ետ ըզպարտեղ բերդին առաջի հայրենիքն. վասն իւր պատարադի Գ. Ես Սարգիս ետու զիմ հայրենի տներն ի քաղաքին ի Ռաձորին դրան վանացս. Ասպնջականացս յանուն պատարադեն զՔրիստոս. :

Ի վերայ միջին կամարին որ ի հանդիպոյ գրանն:

ՈՀԸ. Հնորհին Քրիստոսի ես վասակ որդի դաւթի, թոռն Կիւրիէի արքայի՝ Տէր նոր բերդի՝ խոստովանողքս միարանցաք սուրբ ուխտիս, և ետու սուրբ Յովհաննէսի ընծայ՝ զիմ դանձաղին ձիւթահանքն որ ի վանացս գնեցի վճռամբ և ամենայն ահաւթեանք. յԱւաճորդութեան տեառն բաւաղի որդոյ Ամիր երկամոյ. և փոխարէն ինձ

Հատուցին զտաւն սրբոց վարդանանց յառն ամի
բոլոր եկեղեցիքս . զպատարագն որչափ ես կենդանի
եմ՝ վահրամայ և թամարի առնեն, և յետ վախ-
ճանի խնդ՝ խնձ :

Արդ կատարիչք գրիս աւրհնին ի Բրիտտոսէ . եւ
հակառակքն որոշին . զանէծս կայնի . զյուզայի
և զենեկնն ժառանգէ մարդ որ իցէ և մի լիցի
Թողութիւն յաւիտեանս ամէն :

(Ծարձաւն Եւսէ) :

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՅՕԼԱԿԵՐՏ, ԵՐՈՒԱՆԴԱՇԱՏ, ԵՐՈՒԱՆԴԱ-
ԿԵՐՏ ԵՒ ԲԱԳՐԱՐԱՆ ԲԱԳՐԱԲԱՅՆ ՀԱՅԱՍ-
ՏԱՆԻ :

(Ծարտնակութիւն և վերջ) :

Առաւօտեանն շուտով գնացինք յուխտ սուրբ
Գէորգ եկեղեցին, որ այն Գաւառի ժողովրդոց նշա-
նաւոր ուխտատեղին է և Բագարան գիւղի ժողո-
վրդական եկեղեցին, որն շինուած է նոյնպէս
Պետրոս Կաթողիկոսի և Յովհաննէս Թագաւորի
միջոցին Փրկչական 1030 թուին : Եկեղեցին բերդի
հիւսիսային ծայրին շինած լինելով՝ գեղեցիկ տե-
սարան ցոյց կ'ուայտնողայ . վասն զի՝ բերդն բնա-
կան քարով շրջապատուած՝ շատ ամրութիւն ունի
և բաւական տարածութիւն՝ երկայնութեամբ հիւ-
սիսից ցհարաւ . որոյ մէջ 250 գերդաստուն կ'պա-
րուանակուի . ասել է 1000 կամ 1500 զինուորի
բնակարան եղած կը լինի . որոյ կասկածելի կող-
մերն ամրացուցած է բարձր և ահագին պարսպօք՝
սրբատաշ քարով և կրով որպէս և հարաւային
ծայրի պարիսպն զետնոյնութեամբ կանգնած մնա-
ցած է : Հիւսիսային ծայրումն, ուր եկեղեցին է,
կերեւէր տեղի ջրոյ աւազանի և ծածուկ գետնափոր
ձանապարհ, որով իջել էին Ախուրեան գետոյ վե-
րայ և այն տեղից 50 կամ աւելի աստիճանօք ջուր
առել և հանել բերդի մէջը, ինչպէս Երնջակայ
բերդն և Ապոց . Զորոյ Հրէշէրէր որ ՍՏՈՐԱ-
ԳՐՈՒԹՅՈՒՆ ևս ասի . որոյ համար Օրբելեանց Ստե-
փաննոս պատմադիր Ապիսկոպոսն գրելով՝ Աստ-
ուածաշէն բերդ կանուանէ . Բաղարի բնակչաց
աներն ու կրպակներն, ու փողոցներն և ամենայն
շինուածքներն բերդի արեւելեան կողմին են, զար-

ձեայ մեծամեծ քարով պարսպած . որ միայն 3 մեծ
ղրանց տեղն են երեւում, մինն դէպ ի արեւելք,
—որոյ մօտէ կիսախանդուն մեծ եկեղեցին առանց
արձանագրոյ —, Երկրորդ Դուռն, դէպի արեւմուտք,
—որ բերդի միւս կողմի ձորին է նայում —, իսկ 3րդն
դէպ ի հարաւ, —որ տանի ի գետն —, որոց վերայ,
նոյնպէս և բերդի մեծամեծ քարերի և անտաշ քա-
րափների վերայ շատ ու շատ նայելով՝ Հիւսիսային
գտանել մի նշանակիւց զորոյ անգամ . միայն Խորե-
նացոյ պատմութեան ցուցմամբն կ'իմանայինք, որ
Երուանդ Բ, Թագաւորն շինելով այս բերդն ու
քաղաքն՝ փոխադրեց այս տեղ Արմաւիր քաղաքի
մէջ պահած Հայաստանի նշանաւոր Կոթերն, և
Քրմնապետ կարդեց իւր եղբայր Երուաղին* . զորս
Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն խորտակեց, մանրեց
և անհետացրեց . որոց փոխարէնն կանգնեց Ամե-
նաղոր սուրբ Խաչի նշանն, ուր յետոյ որպէս ի
շինուածոցն երեւի, յաւուրս յիշեալ Պետրոս Կա-
թողիկոսի և Քաղարատունի Յովհաննէս Թագա-
ւորին՝ Իշխանք Անդոյ շինեցին եկեղեցի յանուն
սուրբ Խաչին, որ երկրորդ նորոգութեամբ անուա-
նել են սուրբ Գէորգ, որն ինչպէս վերն ասացի՝
այժմ նշանաւոր ուխտատեղին է գաւառին . Խո-
րենացոյ պատմութիւնիցն կ'իմանայինք, որ երբ
Արտաշէս հզօր զօրութեամբ Պարսկաստանից՝
Պարսկական և Հայկական զօրօք յարձակեցաւ
Երուանդայ վերայ թագաւորութիւնն առնելոյ հա-
մար, որ յանիրաւի տիրապետել էր Երուանդ, քան-
դեց, աւերեց, որպէս Երուանդակերտն, Երուան-
դաշատն նոյնպէս և այս Բագարանն, ուր և սպա-
նեց Երուանդին և նորա եղբայր Երուաղ քրմա-
պետին, որ Բագարանի Աստուածոց յառաջ կանդ-
նած սպիտակազգեստ և բաշկատարած կաղօթէր
Երուանդոյ կենաց և թագաւորութեան համար .
. Մի օր ևս Բագարան մնալով՝ որքան
նշանաւոր շինուածք կար թէ և կիսակործան, կը-
կին և կրկին անգամ տնտնելով, նոյնպէս և բերդի
վերայ եղածներն և զրանց մեծ մեծ քարերն և գե-
տոյ միւս կողմի բլրի վերայ շինած սուրբ Շուշան
անունով գեղեցկաշէն մատուռն, (որոյ շինող Շու-
շան Արքայուհեց, կամ ըստ աւանդութեան բնակ-
չաց Բագարանայ՝ կրմնաւորուհեց համար, վա-
ղուց արդէն աւանդութեամբ մնացած է Հայոց Ազ-